



Եվրոպայում անվտանգության և  
համագործակցության կազմակերպություն  
Երևանյան գրասենյակ



Ծրագիրը ֆինանսավորվել է  
Եվրոպական միության կողմից

Ծրագիրը  
համաֆինանսավորվել է  
ԵԱՀԿ Երևանյան  
գրասենյակի կողմից

Իրականացնող՝  
Իրավաբանների  
հայկական  
ասոցիացիա

Գործընկեր՝  
Ինֆորմացիայի ազատության  
կենտրոն

Իրականացնող՝  
«Էլեգիա»  
մշակութային ՀԿ

## **«ԷԼԵԳԻԱ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ**

### **ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

## **«ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՍՐԱՊՆԴՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ՀՀ ԲՈՒՀԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

«Հակակոռուպցիոն կրթության և բարեվարքության ամրապնդման մշտադիտարկում ՀՀ Բուհերում» ծրագիրը իրականացրել է «Էլեգիա» մշակութային հասարակական կազմակերպությունը՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 1,265,200 ՀՀ դրամ, որից 865,200 ՀՀ դրամը տրամադրվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի տևողությունն է՝ 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև հունիսի 1-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և համաֆինանսավորվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից:

ք. Երևան

2016թ.

**«Հակակոռուպցիոն կրթության և բարեվարքության ամրապնդման մշտադիտարկում ՀՀ  
Բուհերում» ծրագրի հաշվետվություն**

Սույնով «Էլեգիա» մշակութային հասարակական կազմակերպությունը ներկայացնում է **«Հակակոռուպցիոն կրթության և բարեվարքության ամրապնդման մշտադիտարկում ՀՀ  
Բուհերում»** ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) վերջնական հաշվետվությունը:

Ծրագիրն իրականացրել է «Էլեգիա» մշակութային հասարակական կազմակերպությունը՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում:

**Ծրագրի բյուջեն** կազմել է 1,265,200 ՀՀ դրամ, որից 865,200 դրամը տրամադրվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից, իսկ 400,000 դրամը ներդրվել է «Էլեգիա» մշակութային հասարակական կազմակերպության կողմից:

**Ֆինանսական հաշվետվությունը** ներկայացված է առանձին՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության դամաշնորհների հարցերով համակարգողին:

**Ծրագրի տևողությունը** կազմել է երկու ամիս: Ծրագրի իրականացումը մեկնարկվել է 2016 թ. ապրիլ 1-ից և ավարտվել նույն թվականի հունիսի 1-ին:

**Ծրագրի նպատակները.**

Ծրագրի հիմնական նպատակներն էին մշտադիտարկման միջոցով՝

1. Ուսումնասիրել ՀՀ ԲՈԻՀ-երում կոռուպցիոն ռիսկերի պատճառները և նրանց կանխարգելման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետությունը.
2. Հետազոտել ՀՀ ԲՈԻՀ-երում իրականացվող բարեվարքության գծով դասավանդվող առարկաների արդյունավետությունը.
3. Պարզել, թե ինչպե՞ս են ուսանողները կարողանում գործնականում կիրառել բարեվարքության գծով իրենց ստացած գիտելիքները և հմտությունները:

**Ծրագրի իրականացման մեթոդաբանությունը.**

Ծրագիրը իրականացնելու համար կիրառվել է հետևյալ մեթոդաբանությունը.

1. Մշակվել է սոցիոլոգիական հարցումների հարցաթերթ.
2. Կատարվել են սոցիոլոգիական հարցումներ ՀՀ 9 համալսարաններում՝ պատահական ընտրանքի սկզբունքով ընտրված ուսանողների, դասախոսների և ծնողների շրջանում: Սոցիոլոգիական հարցմանը մասնակցել են 350 ուսանողներ, 25 դասախոսներ և 43 ծնողներ.
3. Հարցազրույցներ ԲՈԻՀ-երի ադմինիստրացիայի շրջանում.

4. Հարցազրույցներ ՀՀ Ազգային Ժողովի Գիտության և Կրթության, Սպորտի և Երիտասարդության մշտական հանձնաժողովի փորձագետների հետ.
5. Հարցազրույցներ ՀՀ Գիտության և Կրթության նախարարության, Կրթության Ազգային Ինստիտուտի տնօրենի և փորձագետների հետ:

*Սոցիոլոգիական հարցումներ են կատարվել հետևյալ ԲՈԻՀ-երում.*

1. Երևանի Պետական Համալսարան, հարցմանը մասնակցել է 35 ուսանող.
2. Հայկական Պետական Մանկավարժական Համալսարան, հարցմանը մասնակցել է 41 ուսանող.
3. Երևանի Ճարտարագիտական Համալսարան, հարցմանը մասնակցել է 30 ուսանող.
4. Երևանի Պետական Բժշկական Համալսարան, հարցմանը մասնակցել է 40 ուսանող.
5. Գյումրու Պետական Մանկավարժական Համալսարան, հարցմանը մասնակցել է 66 ուսանող.
6. ՀՀ Պետական Կառավարման Ակադեմիա, հարցմանը մասնակցել է 31 ուսանող.
7. Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարան, հարցմանը մասնակցել է 30 ուսանող.
8. Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա, հարցմանը մասնակցել է 36 ուսանող.
9. Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարան, հարցմանը մասնակցել է 41 ուսանող:

#### **Մշտադիտարկման արդյունքները.**

«Կոռուպցիայի կանխարգելումը և բարեվարքության ամրապնդումը ՀՀ կրթական համակարգում» մշտադիտարկման արդյունքներին կարող եք ծանոթանալ սույն հաշվետվության կից ներկայացված Հավելված 1-ում: Մշտադիտարկման արդյունքների հիման վրա կազմված առաջարկությունները տրամադրվել են Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիային:

#### **Մշտադիտարկման արդյունքների ամփոփումը**

2016 թվականի հունիսի 1-ին Երևանի «Կոնգրես» հյուրանոցում կազմակերպվեց հետազոտության արդյունքների կլոր սեղան-քննարկում:

Կլոր սեղան-քննարկմանը ներկա էին 30 մասնակից, որոնց թվում էին ԲՈԻՀ-երի դասախոսներ և ադմինիստրացիայի ներկայացուցիչներ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի անդամներ, ՀՀ Գիտության և Կրթության Ազգային Ինստիտուտի, ՀՀ Ազգային Ժողովի Գիտության և Կրթության, Սպորտի և Երիտասարդության մշտական հանձնաժողովի փորձագետներ, «Բաց Հասարակություն» Հիմնադրամի համապատասխան մասնագետներ, այլ շահագրգիռ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և ուսանողներ:

Միջոցառմանը բացման խոսքով հանդես եկան «Էլեգիա» մշակութային հասարակական կազմակերպության նախագահ Հարություն Ալեքսանյանը և «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող Կարեն Զադոյանը: Բացման խոսքերին հետևեց ներկայացված զեկույցի և մշտադիտարկման արդյունքների բուռն քննարկումներ: Առաձնապես կարևոր և օգտակար էին մասնակիցների ներկայացրած առաջարկությունները, որոնց մի մասն ընդգրկվեց հետազոտության արդյունքներում, իսկ մյուս մասը հաշվի կառնվի հաջորդ ուսումնասիրությունների ընթացքում:

Կլոր սեղան հանդիպումից հետո բոլոր մասնակիցներին տրամադրվեց հետազոտության արդյունքում հրապարակված հետազոտությունը:

### **Մշտադիտարկման հետազոտության հրատարակումը և տարածումը.**

Մշտադիտարկման և ուսումնասիրությունների արդյունքում հրապարակվել է «Կոռուպցիայի կանխարգելումը և բարեվարքության ամրապնդումը ՀՀ կրթական համակարգում» համապարփակ հետազոտությունը (Տե՛ս Հավելված 1), որը տպագրվել է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում, 200 օրինակ տպաքանակով:

### **Հետազոտությունում ամփոփվել են.**

1. Մշտադիտարկման արդյունքում ձեռք բերված և համակարգված հայտնաբերումները.
2. Առաջարկություններ ԲՈԻՀ-երում կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման ուղղությամբ.
3. Առաջարկություններ ՀՀ 2015-2018թթ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանց միջոցառումների իրականացման ծրագրում տեղ գտած գործողությունների կատարման ուղղությամբ:

Հետազոտությունը տարածվել է ԲՈԻՀ-երի և բոլոր շահառու կազմակերպությունների շրջանում:

### ***Հարություն Ալեքսանյան***

***«Էլեգիա» մշակութային հասարակական կազմակերպության նախագահ,***

***Ծրագրի ղեկավար***

***«07» հունիս, 2016թ.***